

ՀԱՂԱՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ
*COMMUNICATIONS, NOTES
ET DISCUSSIONS*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂ ՄԻԶՆԱԴԱՐԻ «ԴԱԴԻՎԱՆՔ» ԵՒ «ՏԱԹԵՒ» ՑՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿՐԱՅԱՂԱԽՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Դադիվանք»ը եւ «Տարեւ»ը վաղ միջնադարի երկու փառակներ յուշարձաններ են, որոնք ծխալանօրէն միահիւսուած են Հայաստանում քրիստոնէութիւն քարոզող թագէոս Առաքեալի աշակերտներ Դադիի եւ Եւստաթէոսի անունների հետ։ Նրանց նահասակութիւնից յետոյ գերեզմանների վրայ կառուցուել է սրբավայր։ Հազարամեակի ընթացքում վանքերը բազմիցս ունեցել են փայլուն վերելքներ եւ վշտալի անկումներ (նկար 1)։



Նկար 1. Դադիվանք և Տարեւ վանական համալիրներ

Վերականգնողական եւ վերանորոգման աշխատանքները Տաթեւում սկսուել են նախորդ դարի 70ական թուականներից, իսկ Դադիվանքում՝ վանքի վերահսկութիւնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեանն անցումից անմիջապէս յետոյ եւ դրանք շարունակում են առ այսօր։ Այս յուշարձանների վերականգնման հետազոտական փուլում, որ ներառում է քարէ կառոյցներ նիւթերի վիճակի ուսումնասիրութիւն, հետազոտուել են քիմիական եւ հանքարանական բաղադրակազմները, ինչպէս նաև հնագոյն շաղախների որոշ ընութագրեր։

Հնագոյն շաղախների նմոյշներն ընտրուել են «Դադիվան» եւ «Տաքեւ» վանքերի առանձին կառոյցների պատերի եւ հիմքերի տեղամասերից։ Տարրալուծական վերլուծութիւնը, ապարագիւտական, ռենտգենագրային, էլեկտրոնային մանրադիտական հետազոտութիւններն իրականացուել են Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Երկրաբանութեան եւ քիմֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիաներում։ Ճարտարարուեստական բնութագրերը որոշուել են «Հորիզոն 95» շինարարական կազմակերպութեան փորձարարական լաբորատորիայում։ Այս աշխատանքի արդիւնքները բերուած են Աղիւսակ 1/ց Աղիւսակ 3ում եւ նկար 2, նվազ Յում։

Աղիւսակ 1

Հնագոյն շաղախների բնութագրեր

Շաղախի նմոյշաման տեղը	Կարո- նատ, %	Խտու- թիւնը, գ/սմ ²	Ամրու- թիւնը, ՄՊա	Էուծելի մասը, %	Բաղադրակազմը (կիր/լցանիւթեր)
Եկեղեցի «Գրիգոր Լուսաւորիչ» (Տաքեւ)	31	1.75	3.5	20	1 մաս/2 մաս
Եկեղեցի «Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս» (Տաքեւ)	40	1.83	6.0	15	1 մաս /1.5 մաս
«Գաւազան» (Տաքեւ)	18	1.70	3.5	10	1 մաս /4 մաս
«Աղրիւր» (Տաքեւ)	51	1.80	6.5	25	1 մաս /1 մաս
«Սուրբ Եւստա- րեոսի դամբարան» (Տաքեւ)	45	1.72	3.0	20	1 մաս /1.3 մաս
Ամրոցի պատ (Տաքեւ)	33	1.85	3.0	20	1 մաս /2 մաս
Եկեղեցի «Սուրբ Աստուածամոր» (Դադիվան)	30	1.88	5.5	20	1 մաս /2 մաս
«Գրիգոր և այսկոպոսի մատուռ» (Դադիվան)	51	1.80.	6.8	25	1 մաս /1.1 մաս
«Մեղանառուն» (Դադիվան)	89	1.75	7.5	15	1 մաս /0.1 մաս

Աղյուսակ 2


Հնագոյն շաղախների բիմիական վերլուծութեան արդիւնքներ

Շաղախի հնուշա- տաման տերը	Բաղադրիչների պարունակութիւնը, %												
	SiO ₂	Al ₂ O ₃	TiO ₂	Fe ₂ O ₃	FeO	CaO	MgO	CO ₂	P ₂ O ₅	MnO	Na ₂ O	K ₂ O	H ₂ O
Եկեղեցի «Գրիգոր Լուսա- տորիչ» (Տարև)	24.86	8.26	0.24	2.58	0.56	31.6	1.90	23.58	0.52	0.10	1.50	1.00	1.87
Եկեղեցի «Սուրբ Պեղոս և Սուրբ Պետրոս» (Տարև)	17.57	5.43	0.10	1.14	0.14	41.00	1.27	31.24	0.13	0.07	1.30	0.30	0.31
«Գառա- զան» (Տարև)	21.47	7.36	0.10	2.89	0.14	35.37	1.36	28.20	0.20	0.04	1.40	0.80	0.67
«Աղբիւր» (Տարև)	23.43	4.06	0.17	1.84	0.14	31.81	0.88	25.70	0.11	0.10	1.50	1.40	4.86
«Սուրբ Եւստա- քէոսի դամբա- րան» (Տարև)	23.84	5.37	0.10	4.09	0.28	33.40	1.67	27.41	0.15	0.07	1.50	0.60	1.52
Ամրոցի պատ (Տարև)	36.27	12.00	0.38	4.68	0.56	19.40	2.18	4.75	0.40	0.12	1.90	1.50	4.52
Եկեղեցի «Սուրբ Աստվա- ծածոր» (Դադի- վան)	1.89	-	1.67	0.86	-	40.2	1.01	22.5	0.04	-	1.03	0.71	1.51
«Գրիգոր Լուսակո- պոսի մատուռ» (Դադի- վան)	2.22	1.71	0.15	0.05	-	45.3	0.30	26.6	0.12	-	0.91	0.13	0.08
«Սեղան- տուն» (Դադի- վան)	0.80	0.57	-	6.14	-	54.1	0.07	30.5	0.22	-	0.72	0.05	1.31


Աղյուսակ 3

Հնագոյն շաղախների համբարամական բաղադրակազմը


Ծաղախի նմուշառման տևղը	Ծանր ֆրակցիայի միներալներ, %												Թերև ֆրակցիայի միներալներ, %		
	Մագնիսիտ	Լիմնիտ	Համատիտ	Հիպերտան	Դիոպսիդ	Ալգիտ	Տիուանկրիտ	Եղիքրանոր	Ալահնիլիտ	Ցիտրինիտած հաորիկինի	Հարթիային աղակի	Կալարց			
Եկեղեցի «Գրիգոր Լուսաւորիչ» (Տարեւ)	40	20	1	3	5	24	15	7	3	1	-	61	30	2	7
Եկեղեցի «Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս» (Տարեւ)	30	15	1	2	10	36	2	2	1	-	-	50	43	3	4
«Գաւազան» (Տարեւ)	50	27	5	0.5	2	4	1.5	6.5	1	1.5	-	50	30	3	7
«Ալբիւր» (Տարեւ)	10	70	5	-	-	15	-	-	-	-	-	60	25	-	10
«Սուրբ Եւստա- րէոսի դամբարան» (Տարեւ)	35	14	5	3	7	28	-	5	3	-	-	59	30	5	6
Ամբոցի պատ (Տարեւ)	50	30	3	1	3	8	2	4	0.5	-	0.5	65	25	-	10
Եկեղեցի «Սուրբ Աստուածամօր» (Գաղիվանի)	25	62	2	-	0.5	7	0.5	1.5	1	-	-	35	50	-	10
«Գրիգոր Խոխուլու- պոսի մատուռ» (Գաղիվանի)	20	60	3	-	1	7	-	5	1	0.5	2	45	50	-	5
«Մելանոտն» (Գաղիվանի)	45	25	8	-	9	5	-	3.5	1	1	-	45	30	5	20



Նկար 2. Շաղախի նմուշ՝ «Սուրբ Եւստաքի լուսարժություն» դամբարանից (Պ. Դար)



Նկար 3. Շաղախի նմուշ՝ «Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս» եկեղեցուց (Պ. Դար)



Դադիվանքի եւ Տաթեւի հնագոյն շաղախների հետազօտութեան ժամանակ ստացուած արդիւնքների վերլուծութիւնը ցոյց տուեց, որ հնագոյն շաղախների ելակէտային (նիւթական) բաղադրակազմը 1 (օդային կրի մաս) եւ 0.1...4 (աւազի մաս) է, այսինքն գերպարարտ եւ պարարտ շաղախներ են, որոնցում բացակայում են հիդրաւլիկ յաւելանիւթեր: Շաղախների կարբոնատութիւնը դոնուում է 30...90% սահմաններում, խտութիւնը՝ 1650...1850կգ/մ³, ամրութիւնը՝ 2.5...7.5ՄՊա, դրանց լուծուող մասը կազմում է 15...25%:

«Կիրը հարիւր տարեկանում դեռ երեխայ է» – այս հին ասացուածքը որոշակի արժանահաւատութեամբ արտացոլում է իրականութիւնը: Կրաշաղախների ամրանալու գործընթացները բաւականին դանդաղ են ընթանում: Նոյնիսկ շատ հին շաղախները, որոնք ամրանում են հարիւրաւոր տարիներ, սովորաբար կալցիումի կարբոնատի հետ միասին պարունակում են կալցիումի չկարբոնացուած հիդրօքսիդ: Օդային կրաշաղախների պնդացումը հիմնուած է երկու գործընթացի վրայ: Առաջնային պնդացումը կապուած է աւելորդ ջրի գոլորշիացման եւ յագեցած շաղախից կալցիումի հիդրօքսիդի աստիճանական բիւրեղացման հետ, իսկ երկրորդականը՝ օդի մէջ առկայ ածխաթթու գազի միջոցով կալցիումի հիդրօքսիդի կարբոնացմամբ $\text{Ca}(\text{OH})_2 + \text{CO}_2 \rightarrow \text{CaCO}_3 + \text{H}_2\text{O}$ եւ կալցիումի կարբոնատի՝ CaCO_3 , բիւրեղացմամբ, որ համեմատած կալցիումի հիդրօքսիդի՝ $\text{Ca}(\text{OH})_2$, հետ ունի 40 անգամ պակաս լուծելիութիւն: $\text{Ca}(\text{OH})_2$ եւ CaCO_3 նորագոյացութիւնները խտացնում են ու ամրացնում պնդացող շաղախը եւ հանդիսանում են նրա առաջին կառուցուածքային ամրացնող բաղադրիչները: Կրաշաղախի օդում երկարատեւ պնդացման դէպօւմ եւ կրաշախաղների խոնաւացումը բացառող պայմաններում կալցիումի հիդրօքսիդը կախնում է, ապա կապում է լցանիւթերի ակտիւ սիլիկահողի հետ առաջացնելով տոմքերմորիտային խմբի հիդրօսիլիկատներ, որոնց բիւրեղների ձեւը համապատասխանում է վեցանկիւն թիթեղներին (Նկար 2-3):

Կալցիումի հիդրօսիլիկատի առաջացումը՝ $\text{nCa}(\text{OH})_2 + \text{SiO}_2 \text{aq.} \rightarrow \text{nCaO} \cdot \text{SiO}_2 \text{aq.}$, հանդիսանում է կրաշաղախի օդում երկարատեւ պնդացման առաջնային պրոցես: Շաղախի յետազայ կեանքի ընթացքում կալցիումի մնացորդային ազատ հիդրօքսիդը եւ առաջացած ներագոյութիւնները ածխաթթու գազի (CO_2) ազդեցութեան տակ ենթարկեում են կարբոնացման հետեւեալ հաւասարումներով՝ $\text{Ca}(\text{OH})_2 + \text{CO}_2 \rightarrow \text{CaCO}_3 + \text{H}_2\text{O}$; $\text{CaO} \cdot \text{SiO}_2 \text{ aq.} + \text{CO}_2 \rightarrow \text{CaCO}_3 + \text{SiO}_2 \text{ aq.}$: Առաջացած կալցիումի կարբոնատը (CaCO_3) ամրացնում է

շաղախը: Առաջացած սիլիկաթթուի գէլը (SiO_2aq) նպաստում է շաղախի թուլացմանը եւ, նոյնիսկ, կարող է յանդեցնել դրա ամրութեան եւ կապակցման լրիւ կորստի, եթէ կրի պարունակութիւնը պակաս է լցանիւթերի քանակից, իսկ եթէ այն մեծ է, ապա, ինչպէս արդէն նշել ենք, տեղի է ունենում ամրութեան մեծացում: Այս երեւոյթի բնոյթը լիարժէք ուսումնասիրուած չէ: Հնարաւոր է, որ պարարտ շափաներում օդի ածխաթթու գազը (CO_2), սկզբում փոխազդում է կալցիումի ազատ հիդրօքսիդի հետ եւ առաջանում է ամրացնող եւ խտացնող խառնուրդ՝ կալցիումի կարբոնատ (CaCO_3), որն էլ արգելակում է յետազայ կարբոնացումը: Այս պայմաններում դանդաղում է սիլիկաթթուի գէլի անջատումը: Ի վերջոյ, երկու նորագոյացութիւնները՝ բիւրեղացուող կալցիումի կարբոնատը եւ սիլիկաթթուի գէլը լցանիւթը դարձնում են խիտ կոնդրումներատ եւ հանդիսանում են շաղախի ամրութեան լրացուցիչ գործօններ ու դրանց օդակայունութեան պատճառ: Այսպիսով, շաղախի երկարատեւ պնդացման դէպօւմ տեղի է ունենում փոխազդեցութիւն կապակցանիւթի եւ, այսպէս կոչուած, իներտ լցանիւթերի միջեւ: Միներալների առաջացման յայտնի պրոցեսների հետ զուգահեռ ընթանում նաև նորագոյացութիւնների բազմածեւ փոխակերպումներ, որոնք նպաստում են ամրութեան ուժեղացմանը եւ նման են լեռնային ապարներում ընթացող բնական երեւոյթներին:

Տաթեւի շաղախների կալցիումի հիդրօքսիդը գոյութեան հազարամեկների ընթացքում փոխազդել է օգտագործուած ընական աւագների սիլիկահողերի հետ, որոնք կազմուած են կվարցադաշտային սպաթի նստուածքային ապարաների խառնուրդներից բազկացած մանր եւ շատ մանր ֆրակցիայի աւագներից եւ մագնետիտ, լիմոնիտ, աւգիտ միներալների փոքր քանակի խառնուրդներից, ինչպէս նաև խարամային միկրոմասնիկներից եւ այլ հրաբխային ապարներից: Հնագոյն շաղախներում ընթացել են շարունակական փոփոխութիւններ, կապուած սիլիկահողի լրջապայտի հետ, որոնց արդիւնքում առաջացել է կալցիումի հիդրօսիլիկատ, այսինքն՝ $\text{Ca}(\text{OH})_2 + \text{SiO}_2 \rightarrow \text{CaSiO}_3$, վերջինից ածխաթթու գազի՝ CO_2 -ի ազդեցութեան տակ անջատուել է սիլիկահողի օպալային գէլ՝ SiO_2aq , որը կարող էր աստիճանաբար ջրագերծուել, բիւրեղանալ եւ փոխակերպուել քաղքեղոնի՝ SiO_2 , այսինքն վերադառնալ բիւրեղային անջուր վիճակին: Վերը նկարագրուածը սինմատիկօրէն կարելի է ներկայացնել հետեւել կերպ: Կվարցի բիւրեղային սիլիկահող (SiO_2) \rightarrow կալցիումի սի-

$\text{լիկահող} (\text{CaO}\cdot\text{SiO}_2) \rightarrow \text{սիլիկահողի օպալային գէլ} (\text{SiO}_2\text{ազ.}) \rightarrow \text{բիորեղային անջուր քաղցեղոն} (\text{SiO}_2)$:

Տաթեւի ուսումնասիրուած բոլոր շաղախներում բացակայում է կալցիումի ազատ հիդրօքսիդը: Յայտնաբերուել են կալցիումի եւ մագնեզիումի կարբոնացուած հիդրոսիլիկատներ (*Նկար 3 եւ Նկար 4*), որոնց առկայութիւնը՝ առանց փուցուանային յաւելանիւթի, վկայում է, հաւանաբար, խոնաւ պայմաններում աշխատանքի համար չնախատեսուած հազարամեայ կրաշաղախների մէջ ընթացող պրոցեսների անաւարտութեան մասին: Հարկ եմ համարում աւելացնել, որ հնագոյն շաղախների քայլայումը կապուած է քարէ կառոյցների խոնաւացմամբ, եթէ դրանք չեն պարունակում յաւելանիւթեր ջրամերժարար լցանիւթերի՝ թրծակաւի փոշու տեսքով, արսինքն թրծուած կաւի մանրուքի փոշի առաջացած կաւագործութեան թափոններից, կամ բնական փուցուաններ՝ ինչպիսիք են լիթոիդապեմզային, տուֆէ կամ այլ մասնիկներ: Սա բացարւում է նրանով, որ ջուրը միանալով ածխաթթուի հետ քայլայում է կալցիումը առաջանում է թթուային կալցիումի կարբոնատ՝ $\text{Ca}(\text{HCO}_3)_2$, որ համեմատած կալցիումի կարբոնատի հետ՝ CaCO_3 , ունի 100 անգամ աւելի մեծ լուծելիութիւն:

Դադիվանքի շաղախների բոլոր հետազօտութիւններում կիրառուել են կարբոնատային լցանիւթեր տեղի մանր աւագների եւ քարի փոշու խառնուրդներից: Այս շաղախներում, ինչպէս եւ Տաթեւի շաղախներում, բացակայում է կալցիումի ազատ հիդրօքսիդը: Կրաքարերում՝ որտեղ ազատ սիլիկահողը սովորական խառնուկ է, կորոիդային սիլիկահողը (օպալ) հազուադէպ է հանդիպում, քանի որ հիմնային միջավայրում այն անմիջապէս բիւրեղանում է: Ըստ ժամանակակից հասկացութիւնների՝ հնագոյն շինարարների կողմից որպէս աւագ մանրացուած կրաքարի մասնիկների կիրառութիւնը համարւում է բաւականին նպատակայալար եւ արդիւնաւէտ հնարք, որն ըստ երեւոյթի, պայմանաւորուած է եղել հիմնական քարի թափոնների եւ թրծման ենթակայ կրաքարային նիւթերի մնացորդների վերացմամբ: Կարբոնատային կրաքարի արտադրութիւնը թոյլ էր տալիս օգտագործել ոչ միայն թերթրծուկը եւ կրաքարի մանրուքը, այլ նաև գերթրծուկը եւ խարամը, այսինքն սովորական կրաքարային արտադրութեան բոլոր թափոնները: Այսպիսի աւագների օգտագործումն ապահովում է աստիճանաբար անցում լցանիւթից կապակցանիւթ, որն օժանդակում է բաւականին ամուր միջացութեան առաջացմանը, քանի որ կապակցանիւթի եւ կարբոնատային լցա-

նիւթերի կազմի եւ յատկութիւնների նմանութիւնը նպաստում է փոխադարձ ներթափանցմանը եւ ամուր կապակցմանը:

Որոշ հետագօտողների կողմից կրաքարակարբոնատային շղախների յատնագործութեան առաջնահերթութիւնը արուել է ԺԲ. զարի ոռւս վարպետներին: Դ.-Ե. զարերում Սեւ ծովի հիւսային ափերի հիմնագրուած յունական հնագոյն ստրկատիրական քաղաք-գաղութների շաղախների ուսումնասիրութիւնները հերքեցին այս պնդումը, ինչով կրաշաղախների մէջ կարբոնատային լցանիւթերի օգտագործումը վերապրուեց գրեթէ 1700 տարի առաջ: Կրաքարակարբոնատային շաղախներ բազմաթիւ անդամ յայտնաբերուել են նաեւ այլ վայրերում, մասնաւրապէս Դադիվանքում: Հաւանաբար այսպիսի շաղախներ կան նաեւ հայ ժողովրդի պատմամշակութային առաւել հին յուշարձաններում:

Հայաստանի հնագոյն հզօր եւ գեղեցիկ կառուցների երկարակեցութիւնը յաճախ կապում են նաեւ յատուկ՝ իբր յետագայում կորսուած, շինարարական շաղախների արտադրութեան գաղտնիքների հետ: Սակայն այս յուշարձանների երկարակեցութեան ճշմարիտ պատճառը կայանում է ելակէտային նիւթերի ճիշտ ընարութեան եւ պատշաճ նախապատրաստման, ինչպէս նաեւ, հաշուի առնելով տարբեր կոնսարտուկտիւ կառուցուածքներում շաղախների աշխատանքի պայմանները, դրանց ողջամիտ համար-րութեան եւ բարձր որակի շինարարական աշխատանքների մէջ: Հնում նիւթերի նախապատրաստումը, շաղախների պատրաստումը եւ շինարարական աշխատանքների կազմակերպումը խիստ կանոնակարգուած էին յատուկ կանոններով, որոնք ստուգուել էին մեր նախնիների մեծ փորձառութեամբ: Հնագոյն շաղախների հետագօտութիւնները բացառիկ հնարաւորութիւն են տալիս որոշել բաղադրակազմերի բնոյթը եւ օգտագործուած նիւթերի յատկութիւնները, ուսումնասիրելով դրանց ամրացման եւ հարիւրամեակների ու հագարամեակների ընթացքում գործող տարբեր ազրեսիւ ազդեցութիւններից առաջացած մաշման պրոցեսները: Այս ուսումնասիրութիւնները թոյլ են տալիս գնահատել հնագոյն կառուցների շինարարների պատկերացումները կապակցանիւթերի ընտրման եւ նախապատրաստման մեթոդների մասին, որն ի վերջոյ, ապահովում է տեխնոլոգիական հնարքների եւ հայ ժողովրդի շինարարական աւանդոյթների շարունականութիւնը:

Գ.Ա.ԳԻՒԿ Գ.Ա.ԼԱՍԵՍԻՆ

Summary

ON LIMESTONE MORTARS OF THE EARLY MEDIEVAL DADIVANK AND TATEV MONASTERIES OF ARMENIA

GAGIK GALSTYAN

The results of chemical analysis and investigation of mineralogy, as well as technological, electron-microscopic and fluoroscopy studies are presented in this article in order to identify the material and quantitative compositions of ancient mortars applied in the early medieval monasteries of Armenia. The specimens of binders selected from the walls, foundations and other locations of various buildings belonging to Dadivank and Tatev monastic complexes are investigated. The quantitative ratio of binders and sand, the chemical and mineralogical compositions of ancient mortars are identified, as well as their density, strength and water resistance.